

ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ՖԻՐՊՈՒՍԻԻ «ՇԱՀՆԱՄԵ»-ՈՒՄ

ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Արուլ Ղասեմ Ֆիրդուսիի «Շահնամե» վիպերգությունը ասես X դարի Իրանի քաղաքական և մշակութային վերածնության տարեգրությունը լինի: Նրա այս երկում տեղ են գտել ժամանակի մշակույթին, ազգագրությանը, կրոնին, ռազմարվեստին վերաբերող հարուստ վկայություններ, որոնք կարևոր նյութ են ուսումնասիրողների համար: «Շահնամե»-ի արտահայտիչ, հյութեղ, գեղեցիկ, գունեղ և ազդու լեզուն համեմատաբար զերծ է մնացել ժամանակի «ավերիչ» ազդեցությունից: Բացառիկ արժեք է այս ընդարձակածավալ դյուցազնավեպի (60000 բեյթ) բառապաշարը, որն անսպառ աղբյուր է ժամանակակից պարսից լեզվի ուսումնասիրության համար: Այստեղ ուրույն ու ստվար մասն են կազմում կենդանական աշխարհին վերաբերող բառերը: Գեղարվեստական խոսքի մեծ վարպետը դրանք կիրառում է ինչպես բնության, շրջակա միջավայրի, ռազմի, որսի և ծիսական տեսարանների, այնպես էլ հերոսների նկարագրության, արքաների թագադրման, արքունիքի կանանց և նրբակազմ գեղուհիներին գովերգելիս: «Շահնամե»-ում կենդանիների անունների լայն կիրառությունը պայմանավորված է ստեղծագործության բովանդակությամբ, կենդանիների պաշտամունքային ու մարդու կյանքում դրանց ունեցած նշանակությամբ: Կենդանիներն ուժի, խիզախության, հավատարմության և հասարակական դիրքի խորհրդանիշ են եղել: Ստեղծագործության մեջ որոշ կենդանիներ նկարագրվել են կենտրոնադիր, նրանց կերպարներին տրվել է էական կարևորություն ու նշանակություն:

Բանալի բառեր – Ֆիրդուսի, «Շահնամե», ձիանուն, իրանական ծագման բառամիավոր, իրանական լեզուներ, նախաձև, փոխառություն, միջնադարյան բառարան

* **Զարուհի Խաչատրյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ախտեսն

Заруи Хачатрян – кандидат филологических наук, ассистент кафедры иранистики ЕГУ
Zaruhi Khachatryan – Candidate of Philological Sciences, Assistant at YSU Chair of Iranian Studies
Էլ. փոստ՝ zara.khachatryan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0009-8436-0890>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.01.2024
Գրախոսվել է՝ 26.06.2024
Հաստատվել է՝ 03.07.2024
© The Author(s) 2024

Ընտանի կենդանիների անվանումների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ձիանունները: Ձին իրանական ժողովուրդների կյանքում և մշակույթի մեջ դարեր շարունակ իմաստության, ազնվագարմության և հավատարմության խորհրդանիշ է համարվել: Իրանական ազնվացեղ ձիերը մեծ հռչակ էին վայելում հին աշխարհում¹, պարսիկները սրբացնում էին ձիերին ու նրանց զոհ մատուցում աստվածներին²: Ձին առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում պարսիկ արքաների կյանքում³: Ազնվական ընտանիքների համար շատ կարևոր իրադարձություն էր ձիու ընտրությունը, քանի որ այն իր ճակատին պետք է կրեր այդ ընտանիքի տոհմական նշանը⁴:

«Շահնամե»-ի համաշխարհային փառքի արժանանալու մեջ անկասկած մեծ է հերոսի՝ Ռոստամի և նրա հավատարիմ ձիու՝ Ռախշի դերը: Համաձայն ավանդության, երբ հերոսը մահանում էր, որպես սզո նշան՝ նրա թրով կտրում էին սիրելի ձիու բաշն ու պոչը և որպես մատուցք բաժանում ժողովրդին: Այդպես էր նաև, երբ Ռոստամի որդու՝ Սոհրաբի մահն էր ողբում մայրը. «...*Hamī tīq-e Sohrābrā bar kešīd, faš o dom-e aspaš ze nīme borīd... Եվ վերջապես ամբողջ ուժով քաշեց սուրբը, կտրեց ձիու պոչն ու բաշը, որպես սզո մի նշան...*»⁵ (FŠ, I-II, 461)⁶:

Ֆիրդուսին «Շահնամե»-ում կիրառում է *ձիու*՝ երեք տասնյակից ավելի անվանումներ՝ ռազմական գործողությունների միջոցի, ընտանի բեռնակիր կենդանու և փոխադրամիջոցի նշանակությամբ: Հանդիպում են նաև ձիանուններ, որոնք պայմանավորված են ձիու ֆիզիկական և արտաքին առանձնահատկություններով: Սույն հոդվածի շրջանակներում կանոնադրաբանորեն «Շահնամե»-ում վկայված իրանական ծագման ձիանուններից մի քանիսին:

Asb/asp (اسب/اسب)՝ ձի, նժույգ, երիվար (LD, II, 1705, 1706; FM, II, 226; F'A, 104; P, I, 71)⁷: Բառամիավորը բազմիցս վկայվել է «Շահնամե»-ում (800 անգամ, WF, 58)⁸. «...*Har asbī ke Rostam kešīdi be pīš, be poštaš fešordī hamī dast-e xīš... Որ նժույգն էլ, որ բերին Ռոստամին մոտիկ, հարվածեց, փորձեց բազկով ամրությունը մեջքի...*» (FŠ, I-II, 255): Բառանունը «Շահնամե»-ում կիրառվում է նաև

¹ Տե՛ս **Ксенофонт**, Киропедия, Л., 1977, էջ 193, տե՛ս նաև **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Եր., 1986, VII/ 40, էջ 401:

² Տե՛ս **Ստրաբոն**, Աշխարհագրություն, Եր., 2011, XI, էջ 48, տե՛ս նաև **Քսենոփոն**, Անաբասիս, Եր., 1970, էջ 98, **Эсхил**, Трагедии, М., 1989, էջ 19:

³ Տե՛ս **Օ. Хаууām**, “Nouruznāme”, Tehrān, 1933, էջ 51: Այսուհետև՝ ՕX:

⁴ Տե՛ս **Ռախշի և Քարիվարի Նաղշինե**, Շահնամեի բառապաշարի քննությունը, Եր., 2015, էջ 60 (ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար):

⁵ Հոդվածում տեղ գտած բեյթերի թարգմանությունները կատարվել են իրանագիտության ամբիոնի դասախոս Գառնիկ Գևորգյանի և հոդվածի հեղինակի կողմից:

⁶ **A. Ferdowsi**, Šāhnāme, Tehrān, 1361/1982, 4 j.: Այսուհետև՝ FŠ:

⁷ Տե՛ս **'A. Dehxodā**, Loyatnāme-ye Dehxodā, Tehrān, 1993/94, 14 j., այսուհետև՝ LD, **M. Mo'in**, Farhang-e fārsi, Tehrān, 1977, 4 j., այսուհետև՝ FM, **H. 'Amid**, Farhang-e fārsi, Tehrān, 1979, այսուհետև՝ F'A, **Рубинчик Ю.** Персидско-русский словарь, М., 1985, 2-х т., այսուհետև՝ P:

⁸ Տե՛ս **F. Wolff**, Glossar Zu Firdosis Schahname, Berlin, 1935: Այսուհետև՝ WF:

«շախմատային ձի խաղաքար» իմաստով⁹, որը նույնն է նաև ժամանակակից պարսկերենում (LD, II, 1724). «...*Ham ān raftan-e asb se xāne bovad, be raftan-e yek xāne bigāne bovad...* Չիու գնալը (քայլը) երեք տուն է, սակայն երրորդի մեջ թեքվում է ձախ կամ աջ...»¹⁰ (FŠ, V-VI, 2162/3410): Բառամիավորը նույն իմաստով վկայված է նաև պարսից լեզվի XVII դարի «Borhān-e Qāte'» (I, 117) բառարանում¹¹:

«Շահնամե»-ում *asb*՝ «ձիեր ունեցող» նշանակությամբ բաղադրիչով են կազմված առասպելական ու պատմական արքաների անունները¹².

Arjasp (FNS, I, 30)¹³՝ ալ. *Arjataspa* «թանկարժեք ձիեր ունեցող»՝ *arj* «զին, արժեք, արժանի» > ալ. *arāja*- «արժեքավոր, զին ունեցող», *araji* «արժանի, վայել լինել», հմմտ. ժ. պրսկ. «*arzešmand, ba arzeš*» (FRZF, I, 163)¹⁴ և *aspa* «ձի» ձևությից, *Garšasp* (FNS, I, 865)՝ ալ. *keresaspa* «նիհար կառուցվածքով ձիեր ունեցող» > ալ. *Keresa* «նիհար», *Tahmasp* (FNS, I, 296)՝ «ուժեղ ձիեր ունեցող»՝ ալ. *Taxmaspa* > ալ. *taxma*⁻¹⁵ «ճարպիկ, աշխույժ, քաջ» > հ. պրս. **taxma-* > *tak*- «հարձակվել, սուպատակել» արմատից¹⁶ (ՀԱԶԲ, II, 261)¹⁷, *Goštasp* ալ. *Vištāspa-*, հ. պրս. *Vištāspa-* > հ. պ. **višta aspa*- «սանձք բաց ձիեր ունեցող, քմահաճ ձիեր ունեցող», *Gušnāsb*՝ հպրս. **vršna-* > մ. պ. *gušn* «արու»՝ «քաջ ձիեր ունեցող» (FNS, I, 891), *Šavasp* «սև մատակներ ունեցող (FRZF, III, 1899)»՝ > ալ. **Syāvāspa-* (հատուկ անուն է եղել)՝ < հպրս. **syāvāša-* «սև» և *aspa*, *Šedasp* «կարմիր փայլուն ձիեր ունեցող»՝ *šed* «լույս, փայլ» > ալ. *xšāeta-* < հ. պ. **xšaita-*՝ **xšaita-aspa-* > մ. պ. *Šetāsp*¹⁸ (ՀԱԲ, I,

⁹ Չարկ է նշել, որ Ֆիրդուսին, բացի «ձի» և «փիղ» խաղաքարերից, «Շահնամե»-ում հիշատակում է նաև «ուղտ» խաղաքարը, ինչպես նաև այն, որ խաղատախտակն ունեցել է հարյուր վանդակ ներկայիս վաթսուներորդի փոխարեն, տե՛ս **M. Ramzāni, A. Goli**, *Gune-i az bāzi-e šatranj dar Šāhnāme-ye Ferdowsi va sanješ-e ān bā anvā'* -e digar, *Dofaslname-ye Āyene-ye mirās, Tehrān, 1394/2015*, թ. 56, էջ 101-109:

¹⁰ **Ֆիրդուսի**, Շահնամե, թարգ.՝ Ս. Ումադյան, Եր., 1975, էջ 520:

¹¹ Տե՛ս **M. Xalaf-e Tabrizi**, *Borhān-e Qāte'*, *Farhang-e fārsi, Tehrān, 1997*, 4 j.: Այսուհետև՝ BQ:

¹² Տե՛ս **H. Razi**, *Dānešnāme-ye Irān-e bāstān, Tehrān, 1381/2002*, s. 456: Չարկ է նշել, որ *asb*՝ «ձի» բառը, առասպելական և պատմական արքաների տոհմական անունների մեջ հիշատակվելուց բացի, հանդիպում է նաև պետական և ռազմական կոչումների, հրամանատարների անունների կազմության մեջ՝ *Arjasp, Garšasp, Tahmasp, Goštasp, Gušnāsb, Āriyāasp* (Սասանյան Արտաշիր II-ի հրամանատարներից մեկի անունը), *Āyingoštasp* (Որմիզ IV-ի հրամանատարի անունը), *Aspbod* (հեծյալների բանակի հրամանատարի կոչումը), *Āzargoštasp* (երկրի արևելյան շրջաններում պետական պաշտոնի անվանում Սասանյան շրջանում) և այլն:

¹³ Տե՛ս **M. Rastigārfasā'i**, *Farhang-e nāmhā-ye Šāhnāme, Tehran, Pažuhešgāh-e olum-e ensāni va motale'at-e farhangi, 1388/2009*, 2 j.: Այսուհետև՝ FNS:

¹⁴ Տե՛ս **M. Hasandust**, *Farhang-e rišešenāxti-e zabān-e fārsi, Tehrān, Farhangestān-e zabān o adab-e fārsi, 1393/2014*, 4 j.: Այսուհետև՝ FRZF:

¹⁵ Տե՛ս **Chr. Bartholomae**, *Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904 (Berlin, 1961)*, էջ 626:

¹⁶ Տե՛ս **Касимов О.** *Лексика «Шахнаме» Абулькаси́ма Фердоуси, Душанбе, 2011 (диссертация на соискание ученой степени доктора филологических наук)*, էջ 141:

¹⁷ Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942-1962*, 5 հ.: Այսուհետև՝ ՀԱԶԲ:

¹⁸ Տե՛ս **Հ. Հրաբըմյան**, *Հայերենի քերականություն, 1 մաս, Եր., 2003*, էջ 101: Այսուհետև՝ ՀԲ:

219)¹⁹ անվանումներում: «Ձի» բառի նշանակությանն են առնչվում նաև «Շահ-նամե»-ում հանդիպող *Zarasp, Bivarasp, Gušasp, Aspruz, Aspnuv* անունները (FNS, 406):

Բառանունը հնդեվրոպական նախալեզվում ունեցել է **ekuos* ձևը, որից էլ իրանական լեզուներում առաջացած ձևերն են՝ Ավեստայի լեզվում՝ *aspa-*, հ.պրս. *asa-*, իտթ. *assa-*, սողդ. *asp*, սկյութ. *afs-*, մ. պրս., պրթն. *asp*, ժամանակակից իրանական լեզուներում՝ գիլ. *äsb*, թլշ. *asp*, մազանդ. *asb*, վախ. *yaš*, օս. *jæfs*, նիվնդ. *asba*, ֆարսիզ. *asm*, սեմ. *äsp*, քրդ. *hasp* և այլն:

Ժամանակակից պարսկերենում *asb* եզրը հանդիպում է նաև հետևյալ բարդ կառույցներում՝ *asb-e ātaš na'l* «արագընթաց, արագավազ ձի, կրակե սմբակ, հրե պայտ», *asb-e āl* «ալ կարմիր, բուսորագույն ձի», *asb-e tāzi* «արաբական ձի» հմմտ. թրք. *esb-i tozi*, *asb-e tizvar* «արագավազ, սրընթաց ձի», *asb-e pālāni* «գրաստ», *asb-e jangi* «մարտական ձի, պահեստի ձի», նույնիմաստ է նաև *asb-e nabard*, *asb-e čubin* «փայտե ձի», *asb-e xarāmande* «ճեմող, սիգաճեմ քայլող, շոքավար ձի», *asb-e noubati* «պահեստային սպիտակ ձի, երկգույն՝ սև ու սպիտակ ձի», *asb-e yadaki* «պահեստային ձի», *asb-e bi zin* «անթամբ ձի», *asb-e ābi*, *asb-e daryāyi* «գետաձի» (LD, II, 1705):

Հարկ է նշել, որ գրաբարում *ասպ*²⁰ «ձի» (ԲՀԼ, I, 122)²¹ բառամիավորն անկախ կիրառություն չունի, կամ էլ նման տարբերակ մեզ չի հասել²². «...է բառ պարսկական, և նշանակէ ձի կամ երիվար և ի գործ ածի բարդութիս բառից, տաչ. այթ, պարս. էսպ»²³: Նշված ձևույթը մասնավորապես հանդիպում է հայերենի բառապաշարի հաճախադեպ և հազվադեպ կիրառվող *ասպազէն*, *ասպաստան*, *ասպաղոլ կամ ասպայուլ*, *ասպաճարակական*, *ասպանդակ*, *ասպաստանիկ*, *ասպատակ*, *ասպարէզ*, *ասպետ* բառերում և դրանցից կազմված բարդություններում: Այս բոլոր բառերն ամբողջական փոխառություններ են իրանականից՝ մպրս. *asp* > հպրս. **aspa-* «ձի»²⁴, և պահպանում են *ասպ*-ի նախնական «ձի» բառիմաստը՝ անկախ իմաստային հետագա զարգացումներից: Նշենք, որ հայերեն «էշ, ավանակ» (ՀԱԲ, II, 117) բառերը նույնպես բխում են հնիս. *ekwo* «ձի» բառից²⁵:

¹⁹ Տե՛ս նաև **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971-1979, 4 հ.: Այսուհետև՝ ՀԱԲ:

²⁰ Հայերենում *ասպ* «ձի» ձևույթի մասին տե՛ս **Ջ. Խաչատրյան**, *Ասպ* «ձի» ձևույթը հայերենի իրանական ծագման բառապաշարային միավորներում // Կանթեղ, 1 (74), Եր., 2018, էջ 60-68:

²¹ Տե՛ս **Գ. Փեշտրմազճեան**, Բառգիրք Հայկազեան լեզուի, Ի Կոստանդնուպոլիս, 1844-1846, 2 հ.: Այսուհետև՝ ԲՀԼ:

²² Տե՛ս **Լ. Շ. Հովհաննիսյան**, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 129:

²³ **Հայր Գաբրիել Աւետիքեան**, **Հայր Խաչատուր Մխրմէլեան**, **Հայր Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837, I, էջ 315: Այսուհետև՝ ՆՀԲ:

²⁴ Տե՛ս ՀԲ, էջ 108:

²⁵ Տե՛ս **B. Gharib**, Rābete-ye asb o savār dar zabānhā-ye irāni, The Connection of the Horse and the Rider in Iranian Languages Iran Nameh 2, 1393/2014, էջ 4-12:

Bur (𐭠𐭢𐭣)իրանական ծագման բառամիավորը պարսկերենում ունի 1. կարմրաշիկավուն, բոսորագույն ձի, 2. հրակարմիր, ծիրանի (LD, III, 4397; FM, I, 601) իմաստները: Զիանունը հաճախադեպ է «Շահմանե»-ում (22 անգամ, WF, 156). «...*Be maqz andar oftad tarangā tarang, havā por konad nāle-ye bur va xeng...* Հասավ ականջին մի տնկտնկոց, և օդը լցվեց վրնջոցով նծույգների ճերմակ ու բոսոր» (ԲՏ, III-IV, 1333): Բառը հիմնականում կիրառվում է շագանակագույն թույր ունեցող կենդանիների համար:

Զիանունը վկայված է «Borhān-e Qāte'» (I, 314) և «Farhang-e Jahāngiri»²⁶ բառարաններում (II, 1931), իսկ *bovr* տարբերակով հանդիպում է «Farhang-e Nafisi»-ում²⁷ (I, 657): Եզրը որպես սկյութական անձնանուն վկայված է նաև հունական աղբյուրներում՝ *Βορασπος*՝ «հրակարմիր ձիեր ունեցող»²⁸:

Բառամիավորը հանգում է հին իր. **baura-* նախածինի (FRZF, I, 527)²⁹, որն է «մուգ շագանակագույն, փայլուն դեղնակարմիր»: Այն միջ.պրս. ունեցել է *bw* /*bōr*՝ «կարմրաշագանակագույն», դաս. պրս. *bōr*, դարի *būr* ձևերը, իսկ ժամանակակից իրանական լեզուներից ժ. պրս. *bur*, քրդ. (կուրմ., սոր.) *bor*՝ «շագանակագույն, նաև մոխրագույն», *bōr*, *bōra*՝ «շիկակարմիր ձի», օս. *bōr*, յղնբ. *vur*, պամ. մունջ. *vūr*՝ «բաց կարմիր երանգ» (թույր խոշոր եղջերավոր կենդանիների համար): Վախաներենում հանդիպում է *buryó*, *buryoyi* ձևերը՝ «դեղնավուն մուգ պուտերով ձիու գույնը»³⁰: Վերջինս փոխառություն է տաջիկերենից՝ *buryo*, *buryoyi*՝ «ծղոտից հյուսած խսիրի գույնը», հմմտ. աֆղ. *buria*՝ «ծղոտից հյուսած խսիր», պրսկ. *Buriyā*՝ «ծղոտի տեսակ կարպետ, խսիր գործելու համար, նաև՝ ծղոտից հյուսած խսիր՝ բրդյա գորգի տակ գցելու համար»: Բելուջերենում *bor* են անվանում «բաց շագանակագույն երանգով մատակին» (FRZF, I, 528), իսկ Դավանի բարբառում *bu:r*՝ «դեղնասպիտակավուն բուրդ ունեցող ոչխարին»³¹:

Պարսկերենում բառը կազմում է նաև *burabras*՝ «սպիտակ ու կարմիր պուտերով ձի, սպիտակ պուտերով մուգ կարմիր ձի» (LD, III, 4399; F'A, 326) և *bursār*՝ «կարմրաթույր ձի» (LD, III, 4399; FM, II, 601; OX, 53) ձիանունները, որոնց կիրառությանը պարսից դասականների ստեղծագործություններում մեր ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել:

Ենթադրվում է, որ բառամիավորը, իրանականից թափանցելով թյուրքական լեզուներ, անցել է սլավոնականներին որպես գունանուն՝ ռուս. *бурый*՝ «գորշ, կարմրաշիկավուն», լեհ. *bury*, ուկր. *Бурый*՝ «մուգ մոխրագույն»³²:

²⁶ Տե՛ս **H. Inju Širāzi**, Farhang-e Jahāngiri, Mašhad, Mousese-ye čāp o entesārāt-e danešgāh-e Mašhad, 2 j., 1351/1971: Այլուհետև՝ FJ:

²⁷ Տե՛ս **A. Nafisi**, Farhang-e Nafisi, Tehrān, Entesārāt-e «Xayyām», 1355/1976, 5 j.: Այլուհետև՝ FN:

²⁸ **Абаев В. И.** Историко-этимологический словарь осетинского языка, Москва-Ленинград, 1958, т. I, 271.

²⁹ Տե՛ս **Расторгуева В. С., Эдельман Д. И.** Этимологический словарь иранских языков, М., 2003, т. II, էջ 151, 152:

³⁰ **Стеблин-Каменский И. М.** Этимологический словарь ваханского языка, СПб., 1999, էջ 104:

³¹ **A. Salāmi**, Guyeš-e davāni, Tehrān, 2002, էջ 136:

³² Տե՛ս **Фасмер М.** Этимологический словарь русского языка, М., 1986, I, էջ 249:

Tāzi (تازی) - 1. արաբական ձի, 2. ձիու հայտնի ազնիվ ցեղատեսակ, 3. թուրքական ձիուց ավելի նիհար ձի (LD, IV, 5477; FM, II, 1007): Ձիանունը հանդիպում է Ֆիրդուսիի ստեղծագործության մեջ 32 անգամ (WF, 233). «...*Basī asb-e tāzī be zīn-e xadang, basī neyze o xud o xoftān-e jang...* Բազում նծույզներ ընտիր թափաճ ու պայտած, գորքն էլ զինված նիզակով, սաղավարտով ու զրահով» (ԲՏ, III-IV, 1561): Բառն արձանագրված է նաև պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (FJ, II, 6334; BQ, I, 459) և XIX դ. բառարանագիր Գևորգ Դայիր Պալատացիի առաջին պարսկերեն-հայերեն բառարանում³³:

Բառամիավորը կարող է ունենալ հետևյալ բացատրությունները՝ 1. հանգում է պիլվ. *tāzhik*, մ.պ. *tāčik*, ժ.պ. *tāzi* «արաբ, արաբական» ձևերին, որը գալիս է **tāy-čik*- նախաձևից (արաբ. طي *tai* ցեղանունից *čik* վերջածանցի կցմամբ), այսինքն՝ «արաբական, դրան պատկանող», հմմտ. հյ. «տաճիկ»³⁴ բառի հետ: Հաջորդ բացատրությունը կապված է ժ.պ. *tāzi/tāzande* «վազող, ասպատակող» բառաձևի հետ (ժ.պ. *tāxtan* «վազել, ասպատակել»՝ *tāz*- ներկայի հիմքով, որը հանգում է հ.իր. **tāk*- «վազք, վազել, ասպատակել» արմատին (FRZF, I, 883): Նույն իմաստն են արտահայտում նաև *tāzyāni* (BQ, I, 459; LD, IV, 5480; FM, II, 1007), *tizi* (BQ, I, 545; FR, I, 467; FN, II, 1021; LD, V, 6376) բառաձևերը: Եվ քանի որ արաբական ձիերին բնորոշ էին արագավազությունն ու դիմացկունությունը, ուստի բառամիավորն ամենայն հավանականությամբ կարող է նշանակել «արագավազ ձի»:

Պարսկերենում հանդիպում են նաև *asbtāz, asbtāzande* «ձի վազեցնող» և *asbtāz* «հարթ ու ողորկ գետին՝ ձի վազեցնելու համար» բառաձևերը (LD, II, 1727) :

Հայ մատենագրության մեջ «տաճիկ» բառն իբրև անական գործածվում է «արագավազ» նշանակությամբ՝ «ձիու և ուղտի» համար. «...բայց միայն Մերուժանն ՚ի տաճիկ ձի նստեալ փախչէր»³⁵, «... մարդիկ ուղարկեց Հայաստան տաճիկ ուղտերով հողի և ջրի...»³⁶:

Այս ձիու ազնվացել լինելը վկայված է նաև XII-XIII դդ. անհայտ հեղինակի կողմից արաբերենից թարգմանված «Գիրք Վաստակոցում»՝ «...և զխասն տաճիկ ձիոցն սահմանն»³⁷: Բառը ժ. պարսկերենում նաև որսորդական արագավազ շան հայտնի ցեղատեսակ է (LD, IV, 5477):

Tak/tag (تک/تگ) - սրընթաց ձի (LD, IV, 6040; FM, I, 1123; F'A, 357), բոց. «վազք, արագ վազել, սրարշավ գնալ». «...*Begoft o be gorzgerān dast bord, 'enān-e bāre-ye tīz tak rā sepord...* Սուսց ու ձեռքն առավ գուրգը ծանր և արագոտն ձիու սանձն ազատ արձակեց» (ԲՏ, I-II, 48): Բառամիավորը նույն իմաստով արձանագրում է նաև BQ-ն (I, 503):

³³ Տե՛ս Գ. Պալատացի, Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից, ՚ի Կոստանդնուպոլիս, Յորթագետ, 1826, էջ 106: Այսուհետև՝ ԳԴ:

³⁴ Տե՛ս Ն. Հյուբշման, Հայերենի քերականություն, մաս 1, էջ 86:

³⁵ Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 245:

³⁶ Նույն տեղում, էջ 257:

³⁷ Գիրք վաստակոց, Վենետիկ, Վանք Մխիթարայի Ս. Ղազար, 1877, էջ 203:

Ձիանունը ժ.պրս. նշանակում է *tak* «վազք, վազող», որը ծագում է հ.իր. **tāk-* («վազք, վազել, ասպատակել») արմատից < ավստ. *taka* «արագ, սրարշավ», պիլվ. *tak* «հարձակում, վազք», *takīk* «հզոր, ուժեղ, ճարպիկ», *tag kardan abar* «հարձակվել, ասպատակել»³⁸, աֆղ. *tak* «վազել», *tag* «վազել, քայլ, զրոսանք», օս. *tæx* «արագահոս, արագ, ճարպիկ»³⁹: Բառը պարսկերենում ունի նաև «ձիերի համար նախատեսված մրցահրապարակ» նշանակությունը:

Ժամանակակից պարսկերենում կան *takopu/takāpu*, *tagapu*, *takotā* «շարժ, շարժում», *takotāz*՝ նաև «հարձակում, ճարպկություն», *takodou* «շարժում, ձիզ ու ջանք» բառերը⁴⁰:

Takāvar (تکاور) – 1. արագավազ ձի, 2. գեղեցկաքայլ, շորավարձ ձի, 3. ազնվացեղ ձի (LD, IV, 6043; F’A, 357; FM, I, 1124; P, I, 390). «...*Ze har su hayunī takāvar betāxt, salīh-e savārān jangī besaxt...* Բոլոր կողմերից արագավազ ձիերով հարձակվեց, հեծյալ զորքին էլ զինեց, մարտի պատրաստեց» (FŠ, I-II, 253):

Բառը BQ-ն հիշատակում է 1. «արագաշարժ կենդանի», 2. «ձի և ուղտ» (I, 504), իսկ FN-ն՝ «շորավարձ ձի և ուղտ» (II, 943) իմաստներով: Այն բարդություն է՝ կազմված ժ.պ. *tak/tag* «վազք» < հ.իր. **tāk-* և *āvardan/āvar* «բերել» բայի ներկայի հիմքից՝ «վազք բերող, վազեցնող, արագավազ», որն էլ համապատասխանում է ձիու *արագ* վազելու հատկանիշին: Ժ. պարսկերենում բառի «արագավազ ուղտ, վազող շորքոտանի» իմաստները ևս պահպանվել են: Նույն իմաստն ունի նաև *tagāvar* (LD, IV, 6065) ձևը: Եզրը իրանական փոխառություն է նաև թուրքերենում, հմմտ. *tekaver*, օսմ. *esb-i tekâver* 1. մրցավազքի ձի, 2. հեծյալին չցնցող շորավարձ ձի⁴¹:

Čarme/čarmah (چرمه) – 1. ձի, 2. սպիտակամազ նժույգ, 3. արծաթափայլ ձի (LD, V, 7126). «...*Por az xašm o por kīne sālār-e nou, nešast az bar čarme-ye tīzrou...* Նոր հրամանատարը զայրույթով ու քենով լեցուն, ցատկեց նժույգին ձերմակ արագուն» (FŠ, I- II, 109):

Բառը նույն իմաստով արձանագրում է նաև BQ-ն (II, 634): FJ-ն (I, 941), և «Farhang-e Rašidi»-ն (I, 505)⁴² այն նույնացնում են *xeng* ձիանվան հետ, որն ունի նաև «սպիտակամազ ավանակ և ջորի» իմաստները (LD, V, 7127): «Farhang-e Nafisi»-ին տալիս է նաև բառի կիրառությունը *čarmepulād* կառույցում՝ «մոխրագույն, գորշ ձի», բոց. «պողպատագույն ձի» (II, 1166; LD, V, 7127): Նույնիմաստ է նաև *jarne* (LD, V, 6727; BQ, II, 569) եզրը:

³⁸ Տե՛ս D. N. Mackenzie, A concise Pahlavi Dictionary, London, 1971, էջ 81:

³⁹ Տե՛ս Абаев В. И. Историко-этимологический словарь осетинского языка, Л., 3, էջ 284:

⁴⁰ Պարսկերենի խոսակցական տարբերակում է հանդիպում *az tak o tā oftādan* «շարժումից ընկնել» արտահայտությունը, տե՛ս Farhang-e fešorde-ye soxan, Tehrān, 2003, էջ 643, հմմտ.հյ. «*հալից ընկնել՝ հյուժվել, ուժասպառ լինել, չափազանց հոգնել*» խոսակցական ձևի հետ, տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, 1, էջ 789:

⁴¹ Տե՛ս Պ. Զեֆի Կարապետեան, Մեծ բառարան օսմաներեն հայերեն, Պոլիս, 1912, էջ 237:

⁴² Տե՛ս Abd-al-Rašid Tatavi, Farhang-e Rašidi, Tehrān, 1976, 2 j.: Այսուհետև՝ FR:

Օ. Խայամն իր «Nouruznāme»-ում ձիուն բարեբախտ է բնորոշում և հիշատակում նաև *sorx čarme, siyāh čarme, tāzi čarme* (OX, 53) ձիանունները, իսկ Օստր-Ալ-Մաալի Քեյ Քավուսի «Qābusnāme»-ում հիշատակվում է *asb-e čarme xeng* ձևը⁴³:

Հր. Աճառյանը *Ճերմակ* բառը հանգեցնում է պիլ. *čermak ձևին, հմմտ. պրս. čarme: Վրացերենի *ճարմակի ցիենի «Ճերմակ ձի»* անվանումը ևս փոխառություն է պարսկերենից (ՀԱԲ, III, 198): Գ. Ջահուկյանը նույնպես եզրը իրանական փոխառություն է համարում (ՀՄԲ, I, 492)⁴⁴:

Հայերենում *Ճերմակ* բառը առանց վկայության «սպիտակ գույն (ձիու գույնի մասին) և սպիտակ ձի» իմաստներով հանդիպում է ՆՀԲ-ում՝ «առաւել ասի զսպիտակ ձիոյ» (II, 180), և գրաբարի մյուս բառարաններում (ԳԲ, II, 128, ԳԲԲ, 221)⁴⁵: ՀԱԲ-ն արձանագրում է *Ճերմակ* բառի «ձիու» իմաստով գործածությունը միայն Բուզանդի մոտ (երեք անգամ). «Եւ էր...երիվավարն Մուշեղի Ճերմակ ձի մի», «Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ Ճերմականն», «Ճերմակաձին գինի արբցէ», ինչպես նաև *Ճերմակաձի*՝ «սպիտակ ձիեր հեծնող», *Ճանճաճերմակ*՝ «ճանջաճերմակ երիվար», օրինակները Գ. Մագիստրոսի մոտ (ՀԱԲ, III, 198): Այս բառերում գունեզրը, կիրառվելով մեկ անգամ, արտահայտում է միայն ձիու գույն (ԲՀԼ, 1846, 180): Ըստ Լ. Շ. Հովհաննիսյանի՝ «իրանական լեզուներից փոխառյալ *աշխէտ, երաշխ, զարտակ, ճարտուկ և Ճերմակ* բառերը հենց փոխառվել են որպէս ձիու գույն արտահայտող բառեր: Ավելին, կարելի է ենթադրել, որ հայերենի՝ իրանական լեզուներից փոխառյալ բոլոր գունանունները սկզբնապես վերաբերել են կոնկրետ առարկայի...: Փաստորեն արդի հայերենի Ճերմակ «սպիտակ» բառի միջոցով ենք ենթադրում Ճերմակի նախնական իմաստը: *Ճերմակը* կիրառության որոշակի ոլորտ ունի, այն արտահայտում է ոչ թե «սպիտակ» հասկացությունն ընդհանրապես, այլ միայն ձիու գույն»⁴⁶:

Հայ մատենագրության մեջ *սպիտակայթույր ձիու* նշանակությամբ հանդիպում են հետևյալ օրինակները. *Ճերմակաձի*՝ «սպիտակ ձիեր հեծնող», *Ճանճաճերմակ*՝ «ճանջաճերմակ երիվար»⁴⁷, «...երիվավարն Մուշեղի Ճերմակ ձի մի, ...Ճերմակաձին գինի արբցէ, ...ի պատկեր զՄուշեղ Ճերմականն...»⁴⁸: Այս ձիանուններում գունեզրը, կիրառվելով մեկ անգամ, արտահայտում է միայն ձիու գույն⁴⁹: Հարկ է նշել, որ իրանական լեզուներից փոխառյալ *աշխէտ, երաշխ,*

⁴³ Տե՛ս **Օնսոր ալ-մա՛ ալի Կեյկավս**, Qābus nāme, Tehrān, 1956, էջ 106:

⁴⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Այսուհետև՝ ՀՄԲ:

⁴⁵ Տե՛ս **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, Եր., 2000, այսուհետև՝ ԳԲ, **Լ. Խաչատրյան**, Գրաբարի բացատրական բառարան (Ձևաբանորեն տարարժեք բառեր), Եր., 2003, այսուհետև՝ ԳԲԲ:

⁴⁶ **Լ. Շ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 109, 202:

⁴⁷ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 122:

⁴⁸ **Փ. Բուզանդ**, Հայոց պատմություն, էջ 290:

⁴⁹ Տե՛ս Բառգիրք Հայկազեան լեզուի, Ի Կոստանդնուպոլիս, 1846, հտ. 2, էջ 180:

զարտակ, ճարտուկ և ճերմակ բառերը, ունենալով սահմանափակ գործածություն, սկզբնապես վերաբերել են կոնկրետ առարկայի⁵⁰: Ուստի, գունանունը փոխատու լեզվում ունենալով այդ նշանակությունը, հայերեն է անցել նշանակելով միայն ձիու գույն:

Raxš (رخش) - 1. նժույգ, երիվար, 2. մուգ կարմիրը փայլուն սևին հարող ձի, 3. սև ու կարմիր խառը գույներով պտավոր ձի, 4. ազնվացեղ ձի (LD, VII, 10541, 10542; FM, II, 1644; F'A, 658; P, I, 718), բռց. «փայլ, լույս, շեկ, շիկակարմիր, կարմիր և սպիտակ գույների խառնուրդը, նաև՝ ձիու թույրը փայլուն սևի ու խարտյաշի, կարմիրի միջև» (FRZF, III, 434): Եզրը բազմիցս հիշատակում է Ֆիրդուսին (163 անգամ, WF, 429). «...*Hamī Raxš xānīm va bur abraš ast, be xu ātašī va be rang-e ātaš ast... Հենց Ռախշ կոչենք այն հրեղեն ձիուն, որը կրակոտ է և կրակի գույն ունի...*» (FŠ, I-II, 256/115): Ֆիրդուսին Ռախշին բնու-թագրելիս կիրառում է այնպիսի մակդիրներ, ինչպիսիք են՝ *kuh* «լեռ», *kuh-e boland* «բարձր լեռ», *golrang* «վարդագույն», *raxšān/raxšānde* «փայլող», *ruyinesom* «անազն սմբակ», *fulādsom* «պողպատասմբակ», *pilpeykar/piltan*, *žendepil/pilžiyān* «փղամարմին» և այլն (FNŠ, 403)⁵¹:

Բառը հանդիպում է պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (BQ, II, 942; SF, 151⁵²; FJ, I, 752): Ռախշ եզրը արձանագրում են նաև Գ. Պալատացին. «...և սաին թե հատուկ երիվարն *Ըհուսթեմայ՝ էր կարմրերանգ, և ունէր պիսակս սպիտակ ՚ի վր իւր, և ՚ի բազում գործածութ բառս Ռախշ՝ բացարձակապես նշ՝ երիվար*» (ԳԴ, 459), և Գրիգոր Մագիստրոսը. «*Բսկ ուն մերձ առ Դաբաւանդն կոչեցեալ լեառն, Ռոստումն կոչեցեալ Սաճիկ, երիվար նմա ունել սսի Ռաշ այսինքն՝ աշխեն*»⁵³:

«Nouruzname»-ում ձիանունը վկայված է *zard raxš, siyah raxš* տարբերակներով (OX, 53): Ռոքրսաննա անձնանունը նույնպես բխում է *raxš*-ից⁵⁴:

Raxš էին անվանում «Շահնամե»-ի հայտնի դյուցազն Ռոստամի նժույգին «...*Hamī Raxš xānīm va bur abraš ast, be xu ātašī va be range ātaš ast... Հենց Ռախշ կոչենք այն հրեղեն ձիուն, որը կրակոտ է և կրակի գույն ունի...*» (FŠ, 1-2, 256, FNŠ, 403): Բառամիավորի օգտագործման դրվագներից մեկն էլ Ռախշի ընտրության հատվածն է. «...*Har asp ke Ros-tam kešīdī piš, be poštaš fešordī hamī dast-e xīš... Բնչ ձի էլ, որ բերին Ռոստամին մոտիկ, սեղմեց իր ձեռքով նրա մեջքը...*» (FŠ, I-II, 255/100)⁵⁵:

⁵⁰ Տե՛ս **Լ. Շ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 109:

⁵¹ Տե՛ս **E. Zarqāni**, *Raxš va vižegihā-ye u dar Šahnāme-ye Ferdowsi, Mašhad, Faslnāme-ye taxasosi-e adabiyāt-e fārsi-e danešgāh-e Azād-e eslāmi-e Mašhad, 1387/2008, doure-ye V, š. 19, էջ 165*:

⁵² Տե՛ս **Naxjavāni Mohammad ebn-e Hendušāh**, *Sahāh ol-Fors («Sahāh al-Furs»)*, Tehrān, Entesārāt-e bongāh-e tarjome o našr-e ketāb, 1355/1976: Այսուհետև՝ SF:

⁵³ Տե՛ս **Գ. Մագիստրոս**, նշվ. աշխ., էջ 126:

⁵⁴ Տե՛ս **Абаев В. И.** *Осетинский язык и фольклор*, М., 1949, էջ 178:

⁵⁵ Ըստ ավանդության՝ «Շահնամե»-ի դյուցազն Ռոստամն այնքան ուժեղ է եղել, որ նրա բազկի ուժին ոչինչ չի դիմացել: Հերոսը նույնիսկ Ռախշի ընտրությունն է կատարել բազկի միջոցով՝ այն սեղմելով ձիու մեջքին:

Եզրը հանգում է **raxša-* նախաձևին < հին իր. *rauka, rauča*, ավստ. *raoxšna* «փայլուն, փայլող»⁵⁶, սողդ. *ryš* «շառատագույն, թուխ կարմիր՝ սևին տվող կարմիր նծույզ», խորեզմ. *rxšyk* «կարմիրին հարող սրճագույն», վախսան. *rakš* «մոխրագույն, սրճագույն»⁵⁷, իսկ դավանի բարբառում այսպես է կոչվում «սև խաղողը մինչև լրիվ հասունանալը»⁵⁸:

Հայերենում նույնիմաստ է *երաշխ*⁵⁹ բառամիավորը, որն ունի գործածության միայն մեկ դեպք⁶⁰. «Ի ձի երաշխ արիւնագույն հեծեալ գտեր էտես տեսանօղն»⁶¹:

Վրացերենի *რახი* «աշխետ ձի» եզրը նույնպես հանգում է իրանականին⁶²:

Բառը պարսկերենում անվանական մաս է կազմում *raxš tāxtan* «ձի վազեցնել», *raxš rāndan* «ձի վարել», *raxš ravān kardan* «ձիով սլանալ», *raxš zir-e rān āvardan* «ձի հեծնել», *raxš kardan* «կարմրացնել» հարադիր բայերում: Նշենք նաև, որ պարսկերենում ունենք *raxšro* «Ռախշի նման արագընթաց» և *raxšfarmān* «-Ռախշի նման արագ շարժվող» արտահայտությունները, որոնց գործածությունը հանդիպում է XI դարի պարսիկ բանաստեղծ Մանուչեհրիի «Դիվան»-ում⁶³:

Բառանունը պարսկերենում «ուժեղ, հզոր» իմաստով հանդիպում է նաև դարձվածքներում. «*Raxš bāyad tā tan-e Rostam kešad*», բռց. *«Ռախշը պիտի մինչև Ռոստամի մարմինը քաշի»*, այսինքն՝ «այդ գործի համար ուժեղ (զորեղ) մարդ է պետք»⁶⁴:

Չիանունը իրանական փոխառություն է նաև օսմաներենում՝ *rahš* «աշխետ ձի, ազնվացեղ ձի»⁶⁵: Հարկ է նշել, որ ձիու թեմատիկան հատուկ է եղել օսմանյան դիվանի գրականությանը, որի շուրջ ստեղծվել են ռահշիեներ՝ ձիերին փառաբանող քնարական ստեղծագործություններ⁶⁶:

Samand (سمنند) – 1. դեղնաթույր, ոսկեդեղին թույրով ձի, 2. մոխրագույն ձի (ԳԴ, 476), 3. ձիու դարչնագույն, դեղնավուն թույրը (LD, VIII, 12134; FA, 758; FM, II, 1921)⁶⁷: Ֆիրդուսին ձիանունը վկայում է 29 անգամ (WF, 526):

⁵⁶ Տե՛ս H. Bailey, Dictionary of Khotan Saka, London, 1979, էջ 362:

⁵⁷ Տե՛ս Сре́бляна-Каме́нских И. М., նշվ. աշխ., էջ 293:

⁵⁸ Տե՛ս 'A. Salāmi, Guyeš-e davāni, Tehrān, 2002, էջ 259:

⁵⁹ Տե՛ս Հ. Հյուբշման, նշվ. աշխ., 1, էջ 148:

⁶⁰ Տե՛ս Լ. Շ. Հովհաննիսյան, նշվ. Աշխ., էջ 108:

⁶¹ Գ. Մազհստրոս, նշվ. աշխ., էջ 51:

⁶² Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 39:

⁶³ Տե՛ս Manučehri Dameqāni, Divān, Tehrān, Enteshārāt-e «Heydari», 1348/1968, էջ 76, 136:

⁶⁴ A. Dehxodā, Amsāl o hekām, Tehrān, 2000, 2, էջ 865:

⁶⁵ Մ. Աբիլեան, Ընդարձակ բառարան տաճկերէն հայերէն, Կ.Պոլիս, 1892, էջ 281:

⁶⁶ Տե՛ս I. Pala, Ansiklopedik Divān Şiiri Sözlüğü, İstanbul, 2004, էջ 38:

⁶⁷ Պարսից դասական գրականության հեղինակներ Ֆիրդուսիի, Խաղանիի և Նիզամիի ստեղծագործություններում ուրույն դեր և նշանակություն ունեն այն ձիերը, որոնք տարբերվում էին գունային նրբերանգներով: Ըստ իրանցի ուսումնասիրող Ք. Հասանլիի՝ Ֆիրդուսին «Շահնամե»-ում գույների թեմային մոտեցել է յուրովի՝ կիրառելով հիմնական գույների մեծ մասը: Ուսումնասիրողն առանձնացրել է հիմնական գույները երանգներից և դյուցազներգության մեջ կիրառվող գույները բաժանել է 19 խմբի, ավելի մանրամասն տե՛ս K. Hasanli, L. Ahmadiyān, Kārkard-e rang dar «Šāhnāme»-ye Ferdowsi, Tehrān, Faslnāme-ye «Adabpažuhi», 2007, doure-ye I, š. II, էջ 143:

Samand էին անվանում «Շահնամե»-ի հերոս Սոհրաբի ձիուն, որը Ռախշի քուռակներից մեկն էր⁶⁸. «...*Ke dāram yekī korre-ye raxšās nežād, be nīr o čō šīr o beraftan čō bād...* Ես ունեմ մի նախշաքուռակ տոհմիկ ձի, ուժը ասես առյուծի, իսկ թռիչքը շանթածին...» (ԲՏ, I-II, 394), «...*Kamān rā bezeh, bar be bāzu afkand, Samandaš bar āmad bar abr-e boland...* Լայնալիճ աղեղը գցեց իր բազկին, Սամանդին էլ տվեց ամպերի փրփուրին» (ԲՏ, I-II, 399): Քննվող բառամիավորի համար առաջարկվել է ստուգաբանություն⁶⁹:

Չիու հավատարմության մասին է խոսվում «Nouruznāme»-ում⁷⁰, իսկ հնագանդության, լավ բնույթի և արտաքին նկարագրի մասին՝ «Qābusnāme»-ում⁷¹ :

Samand ձիանունը հիշատակվում է նաև «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» ձիաբուժական երկում՝ «սև բաշով ու պոշով խարտյաշ ձի»։ «Եւ կան ձիանսին, որ կոչեն *Սամանդ*. և իր գոյնն է սևգոյն դեղին...»⁷²:

Չիանունը իրանական փոխառություն է նաև օսմաներենում՝ *semend* «մոխրագույն ձի»⁷³, ինչպես նաև «աշխետ ձի, արագընթաց նժույգ»⁷⁴:

Բառամիավորը վկայված է պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (BQ, II, 1166; SF, 79; FJ, II, 1712): Նաֆիսիի բառարանում հանդիպում է նաև *samand-e barqraftār* «կայծակի նման սրընթաց ձի» (III, 1936) նկարագրական բարդությունը:

***Siyāh* (سیاه)** - 1. սևաթույր ձի, ամբողջովին սև ձի, 2. թխաթույր ձի, բոց. «սև» (LD, VIII, 12229; FM, II, 1967; BQ, II, 1199; ԳԴ, 497). «...*Bīārīd goftā siyāh-e marā, nabard-e yabā o kolāh-e marā...* Բերեք, ասաց, սև նժույգս, ռազմի կապան ու զլխարկս...» (ԲՏ, III-IV, 1457):

Բառանվան նախաձևն է **k'jēuá-*, որը ծագում է **kjē-* արմատից՝ «մութ կամ մուգ գույնի, մուգ սրճագույն», հ.պրս. **siyāva*, միջ. պ. *siyā* «սև, մուգ գույն», սողդ. *s'w* «սև», խորեզմ. *s'w* «սև», օս. *saw* «սև», տաջ. *siyoyak* «աչքի բիբ» և այլն:

Ֆիրդուսիի հիշատակված ձիանուններում «սևաթույր, գիշերվա նման մուգ գույնի ձի» իմաստն են արտահայտում բազմաթիվ բառեր՝ *diz/dize, šabdīz, šabgun, šabrang, ābnus, qar, qir, par-e zāq*:

Պարսկերենում *diz/dize* բառերը 1. սևաթույր ձի, 2. ձի (ջորի, ավանակ), որը գլխից մինչև պոչը սև երիզ ունի, 3. ձիու սև թույրը, 4. մուգ մոխրագույն սևին

⁶⁸ Տե՛ս **T. Noldeke**, *Hamāse-ye melli-ye Irān*, Tehrān, 1947, էջ 96:

⁶⁹ Տե՛ս **H. Kirakosyan, A. Sargsyan**, On the Appropriation of Lexicographic Methods of Kemālpašazāde's (1468-1534) Glossary *Dakāyiku l-hakāyik*, *Diyār, Ergon, Zeitschrift für Osmanistik, Türkei- und Nahostforschung – Journal of Ottoman, Turkish and Middle Eastern Studies*, 2. Jahrgang, 1/2021 | Heft, էջ 14-27:

⁷⁰ Տե՛ս **O. Xayyām**, նշվ. աշխ., էջ 53:

⁷¹ Տե՛ս **Onsor al-ma' ali Keykavus**, *Qābus nāme*, էջ 106:

⁷² «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար)», աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասյանի, Եր., 1980, էջ 56:

⁷³ Տե՛ս **Մ. Արիկեան**, նշվ. աշխ., էջ 324:

⁷⁴ Տե՛ս **Պ. Ջեփ Կարապետեան**, նշվ. աշխ., էջ 438:

հարող ձի, ուղտ, ավանակ իմաստներն ունեն: Եզրը վկայված է «Շահնամե»-ում (5 անգամ, WF, 415): Ձիանունների ուսումնասիրության ընթացքում այն հանդիպում է միայն Ֆիրդուսիի մոտ. «...*Koşa dīze-ye to čamad ruz-e jang, šetāb āyad andar sepāh derang...* Որտեղ ես թողել արածելու քո սևաթույրին, երբ պետք է հեծնես ու շտապես մարտի...» (FŠ, I-II, 170/1195): Պարսկերենում բառամիավորից ունենք *dizak*՝ 1. մոխրագույն, 2. թխաթույր, սևաթույր ձի բառը (LD, IX, 12455), որի վկայությանը չենք հանդիպել Ֆիրդուսիի մոտ: *Diz* բառից է նաև *šabdiz* եզրը, որը ինն անգամ հանդիպում է «Շահնամե»-ում (WF, 553): Ֆիրդուսին այս անունով է կոչում առասպելական արքաներ Լոհրասպի, Գոշթասպի, Բահրամ Գուրի ձիերին. «...*Šab-e tīre Šabdīz-e Lohraspī, bīāvarad va zīn-e Goštaspī...* Սկանակիր գիշերվա մթնում Լոհրասպի սևաթույրը (Շաբ-դիզին) բերեցին՝ Գոշթասպի թամբը մեջքին...» (FŠ, III-IV, 1277): *Šabdiz* էին անվանում նաև Մասանյան Խոսրով Փարվիզ (590-628թթ.) արքայի նծույզին, որը նաև *šabgun* (բոց. *գիշերագույն*) էր կոչվում «փայլուն մուգ սև գույն» ունենալու պատճառով: «Սևաթույր ձի» նշանակությամբ ձիանունների շարքն է լրացնում նաև *šabrang*-ը. «...*Sarānešān be xanar beborīd past, be fetrāk-e šabrang-e sarkes bebast...* Դաշույնով կտրեց նրանց գլուխները մարմնից և կապեց իր ըմբոս սևաթույրի թամբից...» (FŠ, I-II, 934/130): «Շահնամե»-ում այս անունով էին կոչում նաև Սիավուշի և Բիժանի ձիերին (RF, 620): Սիավուշի ձիուն անվանել են նաև *Behzād* (FNSŠ, 219, 619), որը Ֆիրդուսին հաճախ «*šabrang*», բոց. «*սևաթույր*», ածականի հետ է կիրառել. «...*Čenīn goft shabrang Behzādra...* Այսպես անվանեց Բեհզադ սևաթույրին...» (FŠ, V-VI, 2039/580)⁷⁵:

Ըստ հին իրանցիների հավատալիքների՝ «*սև ձի*» բարեբախտ և երջանկաբեր է համարվել, իսկ արքաների սևաթույր ձին նրանց ուժն է ցույց տվել և հզորությունն ու փառքը խորհրդանշել⁷⁶: *Siyāh* էին անվանում «Շահնամե»-ի հերոսներ Քեյխոսրով արքայի, Սիավուշի, Գոշթասպի, Էսֆանդիյարի ձիերին՝ մուգ, փայլուն սև գույն ունենալու պատճառով:

Հայերենում հիմնական գունանուններից սևը, լինելով իրանական փոխառություն և սկզբնական շրջանում ունենալով կիրառության նեղ շրջան, վերաբերել է կոնկրետ առարկայի: Սևուկ էր կոչվում նաև հայոց Արտաշես արքայի ձին. «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ...»⁷⁷: Աստվածաշնչում ձիու վեց վկայություններից երեքը ևս վերաբերում են սևաթույր ձիուն⁷⁸:

⁷⁵ Ըստ որոշ կարծիքների՝ «*šabrang*»-ը ձիու թույրն է, իսկ «*Behzād*»-ը ձիու հատուկ անունն է՝ կազմված *beh* «բարի» և *zād* «ծնունդ» ձևույթներից, այսինքն՝ «բարեծին»՝ «*սևաթույր բարեծին*», այս մասին տե՛ս BQ, I, էջ 326:

⁷⁶ Տե՛ս Կ. **Hasanli, L. Ahmadiyān**, *Kārkard-e rang dar "Šāhnāme-ye" Ferdowsi, Faslnāme-ye "Adabpažuhi"*, Tehrān, 2007, 2: 153:

⁷⁷ Մ. Խորենացույ Պատմություն Հայոց, Տփղիս, 1913, էջ 179:

⁷⁸ Տե՛ս Լ. Ծ. **Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 113:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ առաջին անգամ ներկայացվում են իրանական ծագման ձիանունները «Շահնամե»-ում, որոնց թիվը հոդվածում 13-ն է: Ստեղծագործության մեջ դրանք երեք տասնյակից ավելի են, չնչին են արաբական ծագման ձիանունները⁷⁹:

Պետք է նշել, որ Ֆիրդուսիի «Շահնամե»-ում, որը գրված է խորասանյան ոճի դասական պարսկերենով, առավել շատ վկայված են իրանական ծագման ձիանուններ, մինչդեռ ավելի ուշ շրջանի պարսից գրականության շիրվանյան կամ իրաքյան ոճի շրջանակներում ստեղծագործած Խաղանիի և Նիզամիի երկերում արդեն արաբական ծագման փոխառյալ ձիանունների բավական առատ գործածություն է նկատվում: Քննությամբ պարզվեց նաև, որ պարսից դասական գրականության նշված հեղինակների երկերում շատ սակավադեպ են թյուրքական ծագման ձիանունների հիշատակումները՝ ի տարբերություն արաբերենից փոխառյալ ձիանունների հսկայական բազմազանության, որոնք մեծ թիվ են կազմում ինչպես պարսից դասական պոեզիայում, այնպես էլ արձակ երկերում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ավստ. - Ավեստայի լեզու	նիվդ. - Նեհավենդի բարբառ
արաբ. - արաբերեն	ուկր. - ուկրաիներեն
աֆղ. - աֆղաներեն	պամ. մունջ. - պամիրյան
գիլ. - գիլաներեն	մունջաներեն
դաս. պրս. - դասական պարսկերեն	պիլվ. - պահլավերեն
թլշ. - թալիշերեն	պրթն. - պարթևերեն
թրք. - թուրքերեն	ռուս. - ռուսերեն
ժ. պրս. - ժամանակակից պարսկերեն	սեմ. - սեմնաներեն
լեհ. - լեհերեն	սկյութ. - սկյութերեն
խոթ. - խոթաներեն	սողդ. - սողդերեն
խորեզմ. - խորեզմերեն	վախ. - վախաներեն
հ. իր. - հին իրանական	տաջ. - տաջիկերեն
հ. պրս. - հին պարսկերեն	քրդ. (կուրմ., սոր.) - քրդերեն
հյ. - հայերեն	(կուրմանջի, սորանի)
մ. պրս. - միջին պարսկերեն	օս. - օսերեն
մազանդ. - մազանդարաներեն	ֆարսիզ. - Ֆարսիզանդի բարբառ
յղնբ. - յաղնուբերեն	

⁷⁹ Տե՛ս **Չ. 2. Խաչատրյան**, Ձիանունները պարսկերենում և հայերենում. համեմատական ուսումնասիրություն, Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Եր., 2019:

ЗРУИ ХАЧАТРИАН – Некоторые иранские наименования лошадей в «Шахнаме» Фирдоуси. – Лошадь имеет исключительную роль и значение в жизни и культуре иранских народов. Произведение «Шахнаме» великого персидского поэта Фирдоуси со своей исключительной лексикой считается бесконечным источником и мощной внутренней силой в плане развития персидского языка. Своеобразную и неотъемлемую часть составляет лексика, связанная с животным миром, где в наименованиях домашних животных особое место занимают наименования лошадей.

Фирдоуси в «Шахнаме» использует более тридцати терминов, обозначающих лошадей, как средство для ведения военных действий, как домашнее вьючное животное и как транспортное средство, а также наименования лошадей по физическим и внешним признакам.

В рамках этой статьи обсуждается несколько наименований лошадей иранского генезиса, приведенных в произведении «Шахнаме»: *asb, čarme, bur, tāzi, tak, takāvar, xeng, raxš, Raxš, samand/ Samand, sīyāh/ Sīyāh*, подвергая их к морфологическому и эти-мологическому анализу.

Ключевые слова - Фирдоуси, «Шахнаме», лошадиная кличка, фразеология иранского происхождения, иранские языки, образец, заимствования, средневековый словарь

ZARUHI KHACHATRYAN – Some Iranian Horse Names in “Shahnameh” by Ferdowsi. – The horse has an exceptional role and significance in the life and culture of Iranian peoples. “Shahnameh”, the masterpiece of the great poet of Iran, Ferdowsi, is considered as an endless source and a powerful potential for the development of the Persian language thanks to its highly rich vocabulary. A big and unique part of the vocabulary is the words related to the animal world, where the horse names have a special place among the names of domestic animals. Ferdowsi in “Shahnameh” uses more than thirty terms indicating horses, as a mean of military actions, as a domestic pack animal and as a means of transportations, as well as horse names based on the physical and appearance features. In this article, some of the Iranian horse names (*asb, čarme, bur, tāzi, tak, takāvar, xeng, raxš/Raxš, samand/ Samand, sīyāh/ Sīyāh*) are discussed from the morphological and etymological perspectives.

Key words - Firdousi, "Shahname", horse name, phraseology of Iranian origin, Iranian languages, pattern, borrowing, medieval dictionary